ՀԻՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԳՈՀԱՐ ԲԱԴԱԼՅԱՆ

XX դ. երկրորդ տասնամյակի աշխարհացունց իրադարձությունները՝ առաջին համաշխարհային պատերազմը և հայկական ցեղասպանությունը, ռուսական բուրժուա-դեմոկրատական և ապա սոցիալիստական հեղափոխությունները գաղափարական նոր տեղաշարժեր առաջ բերեցին հայ մտավորականության շրջանում, իսկ սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում ավելի արագացրեց մտավորականության մեջ սկսված տարբերակման պրոցեսը։ Նրանք, ովքեր մինչև հեղափոխությունը կանգնած էին աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում, ոդեշնչված պրոլետարիատի հաղթանակով, անմնացորդ նվիրվեցին շինարար աշխատանքներին։ Մի մասը, ընդհակառակը, թշնամաբար տրամադրվեց նոր հասարակարգի նկատմամբ ու նույնիսկ լքեց իր հայրենիքը, իսկ հայ մտավորականության այն մասը, որը տատանվում էր կամ սկզբնական շրջանում զուտ հայրենասիրական զգացումներից մղված իր ծառայությունն էր առաջարկում սովետական իշխանությանը՝ կոմունիստական կուսակցության ճիշտ ու համակողմանի քաղաքականության շնորհիվ, աստիճանաբար վերափոխվեց և իր հայացքը վերջնականապես ուղղեց դեպի գալիքի պայծառ ուղիները։ Այս առումով խիստ բնորոշ է Հովհաննես Թումանյանի 1920 թ. դեկտեմբերի 18-ի նամակը ուղղված Հայաստանի Հեղկոմին։ «Հեղաշրջումի հետևանքով,— գրում էր բանաստեղծը,— երկյուղ է տարածվել հայ մտավորականության վրա, որի մի մասը նախորդ կառավարության օրոք ծառայության մեջ էր։ Նոր դրության անորոշության հանդեպ տարածված երկյուղը կարող է քայքայել ու ցրել մեր առանց այն էլ փոքր մտավորականությանը և առաջ բերել անցանկալի հետևանքներ։ Հայաստանի Հեղկոմը պետք է պարզի մթնոլորտը և մարդկանց հանի էդ շվար ու շփոթ դրությունից՝ ցանկացողներին հրավիրելով ազատ ծառայելու իրենց ժողովրդին։ Ամենքի սրտից ասած կլինեմ, եթե ասեմ թե սպասում ենք էդ կոչին։ Նոր, ազատ Ռուսաստանն էլ, որ գալիս է հաշտեցնի հային ու թուրքին, էնքան մեծ ու փրկարար մի գործ անելու, անշուշտ ինքն էլ հաշտ աչքով կնայի հայ մտավորականությանը, կընդունի նրա մեծ կարևորությունը և ուշադրություն կդարձնի հայ ժողովրդի բանաստեղծի հաշտարար միջամտության վրա»[1]։

ՀԿ(բ)Կ-ն, անշեղորեն առաջնորդվելով լենինյան քաղաքականության սկզբունքներով, վերցրեց հին մտավորականությանը օգտագործելու, վերադաստիարակելու կուրս, արեց ամեն ինչ, որպեսզի շահի նրա համակրանքը, կոտրի անտարբերության սառույցը։ Կուսակցության հոգատար վերաբեր-

---

[1] «Հոկտեմբեր-նոյեմբեր», Երևան, 1932, էջ 129։

մունքը և օրեցօր շենացող հայրենիքը ջերմացնում էին նրանց հոգին։ Ասենք ճանաչար մտավորականության նորանոր խմբեր էին ներգրավվում սոցիալիստական շինարարության մեջ։

Հայաստանի կոմկուսի առաջնահերթ խնդիրը դարձավ հայ մտավորականության կենտրոնացումը հայրենիքում։ ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն, լուսավորության ժողովրդական կոմիսարիատը բազմաթիվ դիմումներով և նամակներով տարբեր հանրապետություններում գտնվող ՀՍՍՀ ներկայացուցիչներին խնդրում էին հավաքագրել ու Հայաստան ուղարկել գեղարվեստի բնագավառի հայ գործիչներին։ Քանի որ՝ նախասովետական շրջանում հայ մշակույթի գլխավոր կենտրոնը Թիֆլիսն էր, ուստի այնտեղից էլ սպասվում էր մտավորականության հիմնական հոսքը դեպի Հայաստան։ Գեղարվեստի գործը կազմակերպելու համար ՀՍՍՀ լուսժողկոմը 1921 թ. հունիսին Վրաստանի Հայկական միսիային խնդրում է Արշակ Ադամյանին առաջարկել Թիֆլիսից տեղափոխվել Երևան[2]։ «Ցանկալի է,— ասված է գրության մեջ,— որ Ադամյանը Հայաստան բերի իր գործին անհրաժեշտ աշխատակիցներ»[3]։ Մի ուրիշ գրության մեջ (23-ը մայիսի 1921 թ.), ուղղված դարձյալ Վրաստանի Հայկական միսիային, ասվում է. «Խնդրում ենք հաղորդել Աղայանին (նկատի ունի երաժշտագետ Մուշեղ Աղայանին—Գ. Բ.) հետևյալը. Ցարենցը խնդրում է երաժշտական նախապատրաստական բաժնի համար է՛լ ավելի կարող ուժեր։ Առաջնակարգ ուժերին կտրամադրվեն բոլոր պայմանները»[4]։ Երաժշտական գործը կազմակերպելու համար Թիֆլիսից Երևան են հրավիրվում երաժշտական միության մի խումբ անդամներ։ 1921 թ. հունիսին ՀՍՍՀ լուսժողկոմը Երևան աշխատանքի է հրավիրում Ռոմանոս Մելիքյանին։ 1921 թ. հրավիրվում են նաև մի խումբ նկարիչներ, որոնց թվում Եղիշե Թադևոսյանը։ Թատերական գործը կազմակերպելու համար Հայաստան է հրավիրվում Շահումյանի անվան դերասանական խումբը[5]։ 1922 թ., լուսժողկոմատի դրության և նրա աշխատակից Դ. Դզնունու բանավոր խնդրանքի համաձայն, Երևան են գալիս դերասաններ Վահրամ Փափազյանը, Մկրտիչ Ջանանը, Միքայել Ջարգարյանը և ուրիշներ։

Հրավեր է ուղարկվում նաև այլ քաղաքներում ապրող արվեստագետներին։ 1921 թ. Նոր Նախիջևանից հրավիրվում են Մարտիրոս Սարյանը, Դավիթ Սողոմոնյանը, Ավետիք Գաբրիելյանը, Թավրիզից՝ Ալեքսանդր Թամանյանը, Արմեն Արմենյանը, Հակոբ Կոջոյանը և ուրիշներ։ 1922 թ. նկարիչ Ստեփան Աղաջանյանին ուղված նամակում կարդում ենք. «ՀՍԽՀ լուսժողկոմը հրավիրում է ձեզ Երևանի պետական գեղարվեստի արվեստանոց նկարչության ղեկավարի պաշտոնով»[6]։

Սովետական իշխանության միջոցառումները լուրջ բեկում առաջացրին գաղութահայ մտավորականության վերաբերմունքում դեպի Սովետական Հայաստանը։ Այդ գործում կարևոր դեր էին խաղում այն մտավորականները, որոնք սովետական իշխանության նկատմամբ ունեցած իրենց ջերմ վերա-

---

2 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 122, ց. 1, գ. 46, թ. 31։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, թ. 7։

5 Նույն տեղում, թ. 15։

6 Նույն տեղում, գ. 682, թ. 30։

բերմունքով վարակում էին նաև մյուսներին։ Այդպիսին էր Ամերիկայում ապրող մշակութային գործիչ Երվանդ Աղաթոնը, որին 1923 թ. նոյեմբերի 3-ին ուղղած նամակում Ասքանազ Մռավյանը գրում է. «Գաղութահայության առողջ մտայնության բեկումն արագացնելու գործում Դուք մեծ դեր ունեք Ձեր ազդեցությամբ ու ձեռնարկությամբ։ Հույս ունենք, որ համապատասխան պարտքի գիտակցությունը Ձեզ կմղե դեպի գործ և երկրի վերածնության խնդրում գաղութահայությունը կունենա յուր շուշափելի մասնակցությունը։ Խորհրդային Հայաստանում սկսված մեր կուլտուր-շինարարական մեծ աշխատանքների համար սպասում ենք Ձեր գործուն աջակցությանը»[7]։

Մտավորականներից շատերը, հայրենասիրական զգացումներից մղված, դիմում էին Հայաստանի ղեկավար մարմիններին, իրենց մասնագիտությանը համապատասխան աշխատանք խնդրելով։ Ղրիմից, 1924 թ. սեպտեմբերին, Ալեքսանդր Սպենդիարյանը գրում է Մռավյանին. «Տեղեկանալով, որ Հայաստանի կառավարությունը կցանկանար օգտագործել իմ փորձը տեղում (Հայաստանում) երաժշտական գործը կազմակերպելու նպատակով, ես իմ լիակատար պատրաստակամությունն եմ հայտնել այդ մասին Մոսկվայում Հայաստանի ներկայացուցչին՝ ընկ. Ս. Տեր-Գաբրիելյանին»[8]։ Շատ մտավորականներ իրենք էին ներկայացնում իրենց արվեստակից ընկերներին, օգնում էին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավվելու արվեստի ու մշակույթի այն մշակներին, որոնք պատրաստ էին ազնվորեն ու բարեխղճորեն ծառայել հայրենիքին։ Այսպես, օրինակ, Ռոմանոս Մելիքյանը 1923 թ. հունիսին լուսժողկոմատին տեղեկացնում է երաժշտական մշակույթի բազմաշխատ անդամներից մեկի՝ Արշակ Բրուտյանի մասին։ «Հանձին Արշակ Բրուտյանի,— գրում է նա,— մենք ունենք մի պոտենցիալ աշխատավոր, ունակ դեռ կատարելու իր ամենաարժեքավոր միսիան. նվիրվելու հայ խազերի ուսումնասիրության, որը թե՛ մեր լեզվի և թե՛ մեր երաժշտության վերածնության նախադուռն է թերևս»[9]։

Հայաստանի պետական թանգարանի հիմնադրման կապակցությամբ Մարտիրոս Սարյանը 1922 թ. փետրվարին Նոր Նախիջևանում ապրող Երվանդ Շահազիզին գրում է. «Հարգելի Երվանդ Ակիմովիչ, պետական թանգարանը կազմակերպված է, որը բաղկացած է յոթ բաժիններից... այս բոլոր բաժինները պետք է ունենան յուր վարիչները, որոնցից մեկը պետք է լինեք Դուք, իհարկե, եթե գաք Երևան։ ...Ձեր վերաբերյալ ես խոսել եմ այստեղ, թե՛ նախկին լուսժողկոմի օրով, թե՛ հիմա և լուսժողկոմի կողմից կարգադրություն է արված Հայաստանի կողմից Ն. Նախիջևանում գտնված ներկայացուցչին, որ ...թանգարանի հետ Դուք էլ գաք, այնպես որ Ձեզ բոլոր հնարավորությունները պետք է տան։

Կյանքը այստեղ ճիշտ է ծանր է... բայց շատ բաներում անհամեմատ լավ է, առաջինը՝ կյանքը բովանդակալից է, ապահովության տեսակետից կասեմ, որ ամեն ծառայող ստանում է օրական երկու գրվանքա հաց և էն էլ լավ հաց»[10]։ Իր նամակում, ուղղված ջութակահար, մանկավարժ, երաժշտա-

---

7 Նույն տեղում, գ. 852, թ. 217։

8 Նույն տեղում, գ. 117, թ. 122։

9 Նույն տեղում, գ. 691, թ. 7։

10 «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 1, էջ 245։

կան-հասարակական գործիչ ռոստովաբնակ Դավիթ Սողոմոնյանին, Ռոմանոս Մելիքյանը 1922 թ. հուլիսին գրում է. «Նորից եմ դրում ու խնդրում, որ մինչև սեպտեմբերի 1-ը լինես մեզ մոտ, որպեսզի միասին անցնենք մեր գործին։ Քեզ այդքանը կասեմ, որ կվերածնվես միանգամայն և հավիտենապես շնորհակալ կլինես ինձանից...։ Այս 5—6 ամսվա ընթացքում հազիվ թե մի երկրում արած լինեն այնքան բան, ինչ արել ենք մենք այստեղ...»[11]։

1923 թ. Թիֆլիսից արտասահմանում գտնվող հայ դերասաններին բաց նամակով դիմում է Իսահակ Ալիխանյանը. «Սիրելի ընկերներ, այժմ մեր ժողովուրդը կարիք ունի իր արվեստագետների, որոնց նա միշտ էլ սիրել է։ Հայ արվեստագետների պարտականությունն է օգնել նրան այդ դժվարին գործում։ Վերադարձեք մեզ մոտ, սիրելի ընկերներ, այստեղ շատ գործ կա անելու։ ...Շտապեցեք մեզ մոտ և անձամբ համոզվեցեք, թե ինչպես է մեր բանվորա-գյուղացիական իշխանությունը սիրում արվեստը և փայփայում նրա մշակներին»[12]։

Ահա այսպես, ի մի էին բերվում մեր մտավորականության ուժերը, որպեսզի նոր շունչ ու բովանդակություն հաղորդեին հայ բազմադարյան մշակույթին։

Սովետական իշխանության միջոցառումների շնորհիվ Հայաստանում մեծ զարգացում ապրեց երաժշտական մշակույթը։ Երաժշտական կյանքի վերելքին իրենց մասնակցությունն են բերում Ալեքսանդր Սպենդիարյանը, Արմեն Տիգրանյանը, Սարգիս Բարխուդարյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Նիկողայոս Տիգրանյանը, Անուշավան Տեր-Ղևոնդյանը, Միքայել Միրզոյանը, Վասիլ Ղորդանյանը, Արշակ Ադամյանը, Եվգենյա Խոսրովյանը, Եվգենյա Խանկամալյանը և ուրիշներ։ Նրանց ջանքերով ստեղծվում են կատարողական կոլեկտիվներ, որոնք պրոպագանդում էին հայ երաժշտական արվեստը։ Հեռանկարներ են բացվում օպերայի և բալետի թատրոնի հիմնադրման համար, որի առաջին նախաձեռնողներն են դառնում դիրիժորներ Կ. Սարաջևը, Ս. Շաթիրյանը, Ս. Ջարեկյանը, ռեժիսորներ Ա. Բուրջալյանը, Ա. Գուլակյանը, դերակատարներ Հ. Դանիելյանը, Լ. Իսիցկի-Հովհաննիսյանը, Ալ. Կարապետյանը (Կարատով) և ուրիշներ։

Գործունեության լայն հեռանկարներ բացվեցին նաև թատերական արվեստի գործիչների առջև։ Ինչպես հայտնի է, նախասովետական Հայաստանում մշտական գործող թատրոն չկար։ Հայ թատրոնի վարպետները հիմնականում խմբված էին Թիֆլիսի, Բաքվի և Կ. Պոլսի թատերական ընկերություններում։ 1921 թ. հիմնադրվեց Երևանի պետական դրամատիկական թատրոնը և հայ թատերական արվեստը թևակոխեց ստեղծագործական նոր շրջան։ Այդ գործին լծվեցին ռեժիսորներ Արշակ Բուրջալյանը, Լևոն Քալանթարը, Գրիգոր Ավետյանը, դերասաններ Վահրամ Փափազյանը, Ստեփան Քափանակյանը, Վաղարշ Վաղարշյանը, Միքայել Մանվելյանը, Համբարձում Խաչանյանը, Վարդան Թերզիբաշյանը, Արտաշես Ամիրխանյանը, Մկրտիչ Ջանանը, Արուս Ոսկանյանը, Հովհաննես Ստեփանյանը, Հասմիկ Հակոբյանը, Հրաչյա Ներսիսյանը, Լուսի Մեդնիկյանը, Օրի Բունիաթյանը, Անահիտ Ղուկասյանը և ուրիշներ։ 1924 թ. Երևանում հիմնադրվում է նաև Հեղափոխու-

---

11 *Ռոմանոս Մելիքյան, Հոդվածներ, նամակներ, հուշեր, Երևան, 1977, էջ 47։*
12 *«Մարտակոչ», 6. III, 1923։*

թյան թատրոնը, ուր աշխատանքի են ներգրավվում Արմեն Մանուկյանը, Ավետիք Բուռնազյանը, Ալեքսանդր Հայրեյանը, Նունե Մուրադյանը, Հովհաննես Մնացականյանը, Օլգա Գուլազյանը, Հայկուհի Գարադաշը, Շավարշ Ահարոնյանը, ժասմենը և ուրիշներ։ Հայաստան են գործուղվում նաև արտիստներ Իսահակ Ալիխանյանը, Վահան Գալստյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Հարություն (Արտեմ) Բերոյանը, Ստեփան Դավթյանը, Մնացական Մարությանը, Գրիգոր Թոքմաշյանը, Գևորգ Ղազարյանը, Արամ Վանցյանը, Աղասի Էլիզբարյանը, Մկրտիչ Գալստյանը։ Սրանք բոլորն էլ հայրենիքի սիրով համակված արվեստագետներ էին, «որոնք մեր երկրի քայքայված, աղքատիկ՝ պայմաններում աշխատավորության համար ծառայելը գերադասեցին ամերիկյան քեռիներին պնակալեզ դառնալուց և ավտոմոբիլային երթերից»[13]։

Սովետահայ թատրոնը խոշոր դեր խաղաց նոր մարդու ձևավորման ու դաստիարակման գործում։ Անդրկովկասում, ուր մեծ նշանակություն ուներ ազգային մշակույթի պրոբլեմը, սովետական թատրոնի զարգացումը, առավել ևս, ընթանում էր պրոլետարական, ինտերնացիոնալ բովանդակության ուղիով։ 1925 թ. Երևանում տեղի է ունենում թատերական խորհրդակցություն, որտեղ նշվում է թատրոնի դերը անցման ժամանակաշրջանում։

Հին մտավորականության նկատմամբ ՀԿ(բ)Կ-ի վարած ճիշտ քաղաքականությունը հանգեցրեց այն բանին, որ հայ թատրոնի մշակները կանգնեցին սոցիալիստական աշխարհայացքի դիրքերում և պրոպագանդեցին այն վեհն ու գեղեցիկը, որը հեղափոխության շնորհիվ դարձել էր ռեալ իրականություն։ Ճիշտ ըմբռնելով նոր հասարակարգում թատրոնի դերը, նրա շուրջը կարող ստեղծագործական ուժեր համախմբելու և նրանց աստիճանաբար նոր հասարակարգի ոգով դաստիարակելու կարևորությունը, Ամո Խարազյանը գրում է. «Հիմա թատրոնի խնդիրն այն է, որպեսզի նա իջնի Օլիմպոսի գագաթից, մոտենա ժողովրդին և իր կենդանի խոսքով ոգևորի, էլ ավելի եռանդ, ավյուն շնորհի խոր քնից արթնացածներին։ Պետք է թատրոնի շուրջը համախմբել նոր կարող ուժեր, մտածել դրանց աճեցման մասին և, որ կարևոր է, ամեն կերպ ամրապնդել կարգապահությունը»[14]։ «Այդ անցումը,— զգուշացնում էր մեծ արվեստագետը,— չպետք է կատարվի հախուռն, հեղաշրջմամբ, այլ աստիճանաբար, զգուշորեն, նրբությամբ, ինչպես նուրբ է ինքը՝ արվեստը»[15]։

Այսպիսով, կուսակցության և հին արվեստագետների գիտակից գործունեության շնորհիվ բազմադարյան հայ թատերական արվեստը զարգացման աննախընթաց ուղի բռնեց։

Սովետական կարգերի հաստատումից հետո գործունեության լայն հունկարներ բացվեցին նաև կերպարվեստի հայ գործիչների առջև։ 1920 թ. դեկտեմբերի 17-ին «Կոմունիստ» թերթում, Չարենցի ստորագրությամբ, հրատարակվեց մի դիմում, որով արվեստի աշխատողները հրավիրվում էին ցուցակագրվելու լուսժողկոմատի արվեստի բաժնում։ Այդ կոչին արձագանքեցին նաև հայ կերպարվեստի նշանավոր շատ դեմքեր։ Նկարիչներին և քանդակագործներին Սովետական Հայաստանում համախմբելու նպատակով՝ 1921 թ.

---

13 «Գրական թերթ», 18. V. 1977։

14 «Խորհրդային Հայաստան», 16. VI, 1921։

15 Նույն տեղում։

հուլիսին, Երևանում կազմակերպվեց նրանց ստեղծագործությունների առաջին ցուցահանդեսը, ուր ներկայացված էր ավելի քան 300 գործ։ Խրախուսելով այս նախաձեռնությունը, Ասքանազ Մռավյանը գրել է. «Ողջունում եմ Հայաստանի աշխատավորությանը, մասնավորապես հայ նկարիչներին, որոնք թողած Թիֆլիսի ու այլ հեռավոր հանգստավետ վայրերի վայելքը, եկել են Հայաստան իրենց վրձնի գեղարվեստական արտադրությունը հրապարակ բերելու և միանալու Խորհրդային Հայաստանի կառավարման մեծ ու վսեմ նպատակներին[16]։ Այս միջոցառումներից հետո Հայաստան տեղափոխվեցին մի շարք պրոֆեսիոնալ նկարիչներ ու քանդակագործներ. Մ. Սարյանը, Վ. Ախիկյանը, Ս. Աղաջանյանը, Գ. Գյուրջյանը, Վ. Գայֆեճյանը, Տարագրոսը։

Կերպարվեստի զարգացման գործում կարևոր երևույթ էր Երևանի գեղարվեստական տեխնիկական դպրոցը, որ հիմնադրվեց 1921 թ. կեսերին, նկարչական ցուցահանդես կազմակերպելու նպատակով Երևան եկած մի խումբ նկարիչների՝ Ս. Խաչատրյանի, Ե. Թադևոսյանի, Գ. Շարբաբչյանի, Վ. Խոջաբեկյանի, Ս. Հովհաննիսյանի և ուրիշների մտահղացմամբ ու նախաձեռնությամբ։ Դպրոցն ուներ նկարչական, քանդակագործական, կիրառական արվեստի բաժիններ։ Գեղարվեստական այս դպրոցը, ինչպես նաև 1923 թ. Լենինականում բացված գեղարվեստական ստուդիան դարձան Հայաստանում ազգային կերպարվեստի նոր կադրերի պատրաստման առաջին դարբնոցները։

Սովետական իշխանության առաջին տարիներին որոշ արվեստագետներ դեռևս կանգնած էին «մաքուր արվեստի» պլատֆորմի վրա, նրանց նպատակն էր ստեղծել «հայկական ոճ», մեխանիկորեն վերականգնելով գլխավորապես հին Հայաստանի ֆեոդալական արվեստի բեկորները[17]։ Գաղափարական ճակատում ՀԿ(բ)Կ Կենտկոմի ծավալած հետևողական պայքարի շնորհիվ շուտով այդ արվեստագետները «առաջ են բերում որոշակի բեկում դեպի խորհրդային թեմատիկան»[18]։ Կոմունիստական կուսակցությունն իր միջոցառումներում ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի արվեստն է՛լ ավելի լայնորեն արձագանքի սոցիալիզմի հրատապ խնդիրներին, դառնա նոր հասարակական կյանքի արտացոլիչը։ «Գրական-գեղարվեստական կազմակերպությունները վերակառուցելու մասին» ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. ապրիլի 2-ի որոշումը կարևոր դեր խաղաց արվեստագետներին վերջնականորեն սովետական իշխանության շուրջը համախմբելու գործում։

Սովետահայ կերպարվեստի զարգացումը աներևակայելի էր առանց Մարտիրոս Սարյանի, Եղիշե Թադևոսյանի, Սեդրակ Առաքելյանի, Ստեփան Աղաջանյանի, Գաբրիել Գյուրջյանի, Փանոս Թերլեմեզյանի, Միքայել Արուտչյանի, Վրթանես Ախիկյանի, Վաղարշակ Մելիք-Հակոբյանի, Կարո Հալաբյանի, Սուրեն Ստեփանյանի, Կարո Մեծատուրյանի, Հակոբ Կոջոյանի, Տաճատ Խաչվանքյանի, Գևորգ Բրուտյանի, Տարագրոսի, Ստեփան Ալթունյանի և ուրիշների, սոցիալիստական կուլտուրայի շինարարության մեջ ցուցաբերած ազնիվ ու հայրենանվեր գործունեության։ Պետք է նշել, որ նրանք ստեղծագործում էին անբարենպաստ պայմաններում։ «Դժվարին ժամանակներ էին,—

16 Նույն տեղում, 22. VII, 1921։

17 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 19, գ. 341, թ. 43։

18 Նույն տեղում։

գրում է հետագայում ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ Գաբրիել Գյուրջյանը,— աշխատում էինք աննկարագրելի ծանր պայմաններում, ներկ չկար, քաթան չկար, նկարչական ամենատարրական պարագաների սով էր»[19]։ Պատկերն ավելի տպավորիչ դարձնելու համար Գյուրջյանը նշում է այն փաստը, որ նոր սոցիալիստական մշակույթի ստեղծումը խթանելու նպատակով կազմակերպչական բաղում դժվարություններ հաղթահարելուց հետո 1924 թ. ապրիլին Երևանում պատկերահանդես կազմակերպելու կապակցությամբ նկարիչները թերթի միջոցով շնորհակալություն են հայտնում լուսժողկոմատին։ «Այժմ անցել են տասնյակ տարիներ,— գրում է նկարիչը,— մասնակցել եմ բազմաթիվ ցուցահանդեսների, բայց միշտ առաջին սիրո նման ինձ ջերմացնում է հիշողությունը անդրանիկ դարնանային պատկերահանդեսի մասին, երբ Հոկտեմբերի կենարար գաղափարները մեզ մղում էին իսկական, աննախադեպ սխրանքների»[20]։ Սոցիալիստական արվեստի զարգացմանը նպաստելու նրանց ցանկությունն արտացոլվել է այդ տարիներին ստեղծված գործերում, որոնք ամբողջական պատկերացում են տալիս այդ արվեստագետների հոգևոր վերակերտման մասին։ Շուտով սովետահայ կերպարվեստը, շնորհիվ իր տաղանդաշատ արվեստագետների, համաշխարհային ճանաչում է գտնում։ 1924 թ. Վենետիկում կազմակերպված ցուցահանդեսին ներկայացվում են հայ նկարիչների (Սարյան, Կոջոյան, Թադևոսյան, Աղաջանյան, Շարբաբչյան, Առաքելյան) 10 գործ, և Սարյանը Վենետիկ է դնում որպես պատվավոր հյուր։

Սովետական իշխանության առաջին տարիներին լայն զարգացում ապրեց նաև ճարտարապետությունը։ Այդ բնագավառի նվաճումները դարձյալ պայմանավորված էին նախասովետական մտավորականության նկատմամբ կուսակցության վարած ճիշտ քաղաքականությամբ և այդ մտավորականության հայրենանվեր գործունեությամբ։ Սովետահայ ճարտարապետության զարգացումն անխզելիորեն կապված է Ալեքսանդր Թամանյանի անվան հետ։ Նա Երևան եկավ Սովետական Հայաստանի կառավարության հրավերով, 1923 թ. ապրիլին, անմիջապես լծվեց եռանդուն աշխատանքի՝ որպես ժողկոմխորհի գլխավոր ինժեներ։ Թամանյանը սկզբից ևեթ հստակորեն պատկերացնում էր Հայաստանում տիրող իրավիճակը և իր առջև դրված խնդիրները։ 1923 թ. մայիսի 23-ին ՀՍՍՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին ուղղած զեկուցագրում նա գրում է. «Այժմ Հայաստանի համար անհրաժեշտ կառուցումների էությունը հին վերքերի բուժումը չէ և ոչ էլ հին ավերված կառուցումների վերականգնումը, այլ բավարարումն այն պահանջմունքների, որոնք թելադրվում են Հայաստանի կուլտուրական ու տնտեսական վերածնության նոր սկզբունքներով[21]։ Եվ իրոք, Թամանյանը եկավ վերածնելու հայ ճարտարապետության դարավոր ավանդույթները և ժամանակի շունչը հաղորդելու դրանց։ Ի տարբերություն նրանց, ովքեր պատմական ժառանգությանն ուղղված ամեն մի հետադարձ հայացք դիտում էին որպես մի քայլ ետ՝ Թամանյանն իր ստեղծագործությամբ անհերքելիորեն ապացուցեց ազգային ճարտարապետության առաջադիմական ավանդույթների՝ որպես ոճական նոր ուղղու-

---

19 «Երեկոյան Երևան», 7. XI. 1977։

20 Նույն տեղում։

21 «Լենինյան ուղիով», 1961, № 4, էջ 93։

թյան ստեղծման նախադրյալներից մեկի զարգացման օրինաչափությունը։ Թամանյանն իր ստեղծագործության մեջ հավատարիմ էր նոր, պրոլետարական կուլտուրա ստեղծելու մասին Վ. Ի. Լենինի ցուցումին. «Առանց պարզ ըմբռնելու այն, որ միայն մարդկային ամբողջ զարգացմամբ ստեղծված կուլտուրան ճշգրիտ գիտենալով, միայն նրա վերամշակմամբ կարելի է կառուցել պրոլետարական կուլտուրա—առանց այդպիսի ըմբռնման մենք այդ խնդիրը լուծել չենք կարող»[22]։

Հայ ժողովուրդը երախտապարտ է Թամանյանին, որ համաշխարհային ճանաչման հասցրեց հայ ճարտարվեստը և ստեղծեց հետևորդների մի ամբողջ սերունդ։ Թամանյանի հետ կողք-կողքի աշխատում ու ստեղծագործում էին ավագ սերնդի ճարտարապետներից շատերը. Ն. Բունիաթյանը, Ա. Արաղյանը, Ա. Ահարոնյանը, Զ. Բախշինյանը, Մ. Գրիգորյանը, Տ. Երկանյանը, Կ. Հալաբյանը, Մ. Մազմանյանը, Հ. Մարգարյանը, Գ. Քոչարը, Ս. Սաֆարյանը և ուրիշներ։ Նրանց հետ էր նաև Թորոս Թորամանյանը։ Ինչպես մյուսները, այնպես էլ Թորամանյանը աշխատանքի և գիտական գործունեության բուռն ժամանակաշրջան ապրեց Սովետական Հայաստանում։ Նա վիթխարի աշխատանք կատարեց ճարտարապետական շենքերի չափագրության ու վերակազմության, հայկական ճարտարապետության տեսական հարցերի մշակման ուղղությամբ, մասնակցեց հնագիտական բազմաթիվ պեղումների։

Հայաստանի սահմաններում գտնվող գեղարվեստական և հնագիտական հուշարձանները պահպանելու և ուսումնասիրելու համար դեռևս 1921 թ. հունվարի 8-ին, ՀՍԽՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի հրամանով, ստեղծվում է հնությանց և գեղարվեստից պահպանության կոմիտե, որը 1923 թ. վերանվանվում է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի։ Այստեղ է կենտրոնացվում գիտնականների ու արվեստագետների ավագ սերնդի լավագույն կորիզը՝ Մարտիրոս Սարյան, Ալեքսանդր Թամանյան, Աշխարհբեկ Լոռի Մելիք-Քալանթար, Գևորգ Ասատուր, Թորոս Թորամանյան, Բագրատ Հասան-Ջալալյան, Երվանդ Լալայան, Սենեքերիմ Տեր-Հակոբյան, Նիկողայոս Բունիաթյան, Գարեգին Լևոնյան, Երվանդ Շահազիզ, Հովսեփ Տեր-Աստվածատրյան, Հովսեփ Օրբելի, Թադևոս Ավդալբեգյան։ Կոմիտեի պատվավոր անդամ է ընտրվում ակադեմիկոս Նիկողայոս Մառը։

Հայաստանի կոմունիստական կուսակցության լենինյան քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ հայ ժողովուրդը պատմական մեծ նվաճումների հասավ գեղարվեստի բոլոր բնագավառներում։ Մտավորականության հետ տարվող աշխատանքներում կուսակցությունը հենվում էր համոզման, խրախուսման, վերադաստիարակման մեթոդների վրա։ 1921 թ. հոկտեմբերին հրապարակվեց ՀՍԽՀ ժողկոմսովետի «Գրական-գեղարվեստական աշխատողների ապահովության մասին» դեկրետը, որի համաձայն կենսաթոշակ էր նշանակվում ինչպես Անդրկովկասում, այնպես էլ արտասահմանում գտնվող հայ նշանավոր արվեստագետներին։ Դրանց թվում էին Հովհաննես Ստեփանյանը, Միքայել Մանվելյանը, Մարտիրոս Սարյանը, Նիկողայոս

---

[22] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 348։

Տիգրանյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը, Ստեփան Կանայանը, Թորոս Թորամանյանը, Հարություն Ճուղուրյանը, Երվանդ Շահազիզը, Իսահակ Ալիխանյանը, Երվանդ Լալայանը[23]։ 1927 թ. ավելանում է թոշակառու վաստակավոր գործիչների թիվը[24]։

Կուսակցությունը բարձր էր գնահատում հին մտավորականներին, որոնք ազնվորեն ծառայում էին վերածնվող հայրենիքին, ըմբռնել էին կոմունիստական գաղափարների կենսունակությունը, նրա համամարդկային բովանդակությունը։ Սովետական կառավարությունը ըստ արժանվույն էր գնահատում հին մտավորականության ազնիվ ու անձնուրաց բոլոր ներկայացուցիչներին՝ մեծ շուքով տոնելով նրանց բեղմնավոր գործունեության տարելիցները և այսպիսով էլ ավելի կապելով նրանց նոր հասարակարգի հետ։ Այսպես, օրինակ, մեծ շուքով տոնվում են Իսահակ Ալիխանյանի թատերական գործունեության 25-ամյակը, Արմեն Արմենյանի՝ 40, Միքայել Մանվելյանի՝ 30, Գարեգին Լևոնյանի 40-ամյա հոբելյանները՝ ի պատիվ սովետահայ արվեստին մատուցած նրանց մեծ ծառայության։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, նկատի ունենալով հայ մտավորականության ավագ սերնդի անգնահատելի ծառայությունները, նրանցից ոմանց արժանացնում է նաև կառավարական բարձր պարգևների ու կոչումների։ Կոմունիստական գաղափարներն այնքան հոգեհարազատ էին դարձել մեր հին մտավորականներից շատերին, որ որոշ արվեստագետներ ցանկություն են հայտնում ընդունվել կոմունիստական կուսակցության շարքերը։ Նրանց թվում էին երաժիշտներ Սպիրիդոն Մելիքյանը, Անուշավան Տեր-Ղևոնդյանը, Կարո Ջաքարյանը[25] և ուրիշներ։ Սովետական կառավարությունը հնարավորություն է ընձեռում արվեստագետներին, իրենց արվեստը կատարելագործելու նպատակով, մեկնել Մոսկվա, Լենինգրադ և արտասահման։

Հին սերնդի հայ արվեստագետները ոգեշնչված էին Հայաստանի սոցիալ-տնտեսական, կուլտուրական վիթխարի վերափոխումներով, որ տեղի էին ունենում իրենց իսկ աչքի առջև՝ կոմունիստական կուսակցության ձեռնարկումների շնորհիվ։ Լևոն Քալանթարը այդ մասին գրել է. «Հինգ տարի սրանից առաջ երազել անգամ չէր կարելի այն հեռանկարի մասին, որ ներկայումս արդեն բացվում են կուլտուրայի ասպարեզում աշխատողների համար։ Իր սնունդը առնելով աշխատավոր ժողովրդի ստեղծագործ ոգուց, նրա ապրումների ոճից ու ռիթմից, իրացնելով աշխատանքի եվրոպական մեթոդներ և տեխնիկա, մեր թատրոնը, հաստատ համոզված եմ, խոշորագույն նվաճումներ պիտի անի հենց մոտակա տարիների ընթացքում։ Մեր պետական թատրոնի եռամյա փորձն արդեն ամուր հենարան է գծագրվող դալիքի համար»[26]։

Սովետական ականավոր գրող և հասարակական գործիչ Մարիետա Շահինյանը, բարձր գնահատելով հայ հին մտավորականության հայրենանվեր գործունեությունը, նրանց համարում է «...ինքնազոհ մարդիկ, որոնք թողեցին հանգստությունը, հարմարավետությունը, սովորական միջավայրը, փառ-

23 ՀՍՍՀ ՀԱՍԾ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 162, թ. 12։
24 ՄԱԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 8, գ. 139, թ. 58—59։
25 Նույն տեղում, ց. 15, գ. 131, թ. 21։
26 «Արեգ», 1924, № 18, էջ 44։

քը, նյութական բարեկեցությունը, որպեսզի աշխատեն մոխրակույտերից բարձրացող, բայց դեռևս համարյա աղքատ ու կիսավեր սովետական փոքրիկ հանրապետությունում»[27]։

Այսպիսով, Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո կուսակցության ու կառավարության ջանքերի շնորհիվ հայ ստեղծագործական կարող ուժերի համախմբումը մայր հայրենիքում կարևոր ազդակ է դառնում սովետահայ արվեստի զարգացման գործում։

РОЛЬ СТАРОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ В РАЗВИТИИ СОВЕТСКОГО АРМЯНСКОГО ИСКУССТВА

ГОАР БАДАЛЯН

Резюме

Вовлечение дореволюционной армянской интеллигенции в социалистическое строительство было одним из важнейших направлений политики Коммунистической партии. Благодаря успешному претворению в жизнь этой политики в сферу развития советского армянского искусства были вовлечены лучшие представители интеллигенции старшего поколения, которые со временем изменили свои прежние политические убеждения и безоговорочно перешли на сторону советской власти.

---

[27] М. Шагинян, Об армянской литературе и исскустве, Ереван, 1961. с.151.